ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլ, 2026 թվականի № 34-Լ

«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՁՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ, 50-րդ հոդվածներով և 67-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Կանոնադրական կապիտալում պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման և պետության բաժնեմասից ստացվող շահութաբաժինների հաշվարկման և վճարման կարգի» 3-րդ, 12-րդ և 13-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2026 թվականի թվականի ապրիլի 17-ի N 02/3-3/10241-2026 գրությունը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի գործունեության արդյունքներով ստացվել է զուտ շահույթ 2 013 000 (երկու միլիոն տասներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է Ընկերության կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերության կանոնադրական կապիտալում 100 տոկոս պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց 2025 թվականի գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել տարեկան շահութաբաժին՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված չափով:

2. Հաստատել Ընկերության կողմից 2025 թվականի գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժնի չափը՝ 1 006 500 (մեկ միլիոն վեց հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սահմանել Ընկերության 2025 թվականի գործունեության արդյունքներով ստացված 2 013 000 (երկու միլիոն տասներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ կազմող զուտ շահույթի բաշխման հետևյալ ուղղությունը՝

   ա) 1 006 500 (մեկ միլիոն վեց հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամի չափով Ընկերության կանոնադրական կապիտալում պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց տարեկան շահութաբաժնի վճարում:

4. Ընկերության կանոնադրական կապիտալում պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինը վճարել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի համապատասխան հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշմամբ սահմանված ժամկետում:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

17 ապրիլ, 2026 թվականի
ք. Երևան